

ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ԲԵԹՂԵՀԷՄ ԵՐԹԱԼ ԶՈՒԶՈՂ ՀՈՎԻՒԸ)

Հրեշտակներն ու երկնային զօրութիւնները լոյսերով ու քաղցր երգեցողութեամբ երկինքը կենդանացնելէ վերջ, մեկնած էին: Հովիւները լսկ, իրենց ոչխարներուն հետ կեցած մայրն աստղի լոյսին տակ, տակաւին կը նայէին հեռուն, բլուրներէն անդին, ուր մեծ աստղ մը ինքզինքը կ'այրէր: Անոնց աչքերը մութին մէջէն կրակ կ'առնէին, հեռուններէն տակաւին բխող մեղեդիներուն թևով:

«Բեթղէէմ երթանք, ըսաւ հովիւներէն ասրէցը, տեսնելու համար այս հրաշալի իրողութիւններուն արդիւնքը, զոր երկինքը կը բանայ մեր աչքերուն առջև այս գիշեր, արդարութեան, բարութեան, սիրոյ և խաղաղութեան պատգամներուն կենդանակերպը անխորհրդակալով, աստղերու և հրեշտակներու միաձայն հանդէսի մը մէջ, յորդումի հանելու չափ այս գիշերը, իր անհունաստիւս սողաւորտով:»

Դաւթի քաղաքը, հեռուն, բլուրի մը բարձունքին՝ կը ցնծար, նորանչոյլ աստղի շողերովը պատմուճանուած: Անոյց խորերէն մտեր և արքաներ ճամբայ կ'իյնային, ստաշխով ու սակիով բեռնաւոր, խազարկելու համար ծնող մանկան վայրը:

Հովիւները կը պատրաստուէին մեկնելու, սակայն անոնցմէ մին, որ Ամովս կը կոչուէր, կռթնած իր գաւազանին, լուս և անտարբեր, չէր ուզեր շարժիլ: «Երթանք, ըսաւ հովիւներէն ամենէն ասրէցը, տեսէք, ահա լոյսը կը շառնայ քաղաքին վրայ, պատուելով հորիզոնը, և աստղերու սակի փոշին կը բարձրանայ արքայավար երկրորդներու սմբակներուն վերեւ:»

Սակայն Ամովսը ժխտական շարժեց իր գլուխը և չուզեց ընկերանալ մեկնելու պատրաստ հովիւներուն:

Յետոյ, յանկարծ, լուսեցաւ քաղցր ու խորունկ ձայն մը, երկնքէն ու երկրէն բխող, որ կ'ըսէր. «Այսօր մարդոց համար Փրկիչ մը ծնաւ Դաւթի քաղաքին մէջ, և Անոր փառքն է որ կը շողայ երկնքին վրայ:»

«Երթանք, ըսին հովիւները Ամովսին, չե՞ս լսեր հրեշտակին ձայնը որ նոր Փրկիչ ծննդեան բարի լուրը կ'աւետէ մեզի:»

«Ոչինչ կը լսեմ ես, ըսաւ Ամովս, հոգիս լուս է և անարձագանգ, ամառուն երկնքին պէս:»

Սրտմտեցաւ ասրէց հովիւը ընկերոջ այս անտարբերութեանը համար, ու ըսաւ. «Դուն աչքերովդ տեսար երկնային զօրութիւնները և ականջներովդ լսեցիր անոնց քաղցր համերգը, որոնք Տիրոջ փառքը կ'երգէին բարձունքներու մէջ և երկրի վրայ:»

Հովիւներէն ուրիշ մը հեգնանքով ըսաւ. «Որքան ասեմ որ երկինքը չէ փլած և լեռները կը պահեն իրենց տեղը, Ամովս պիտի չուզէ համոզուիլ եղածին: Անիկա աւելի մեծ ու եղբրական ապացոյց մը կ'ուզէ, քան Աստուծոյ ձայնը:»

Ամովս աւելի խոր խրելով իր գաւազանը հողին մէջ և կռթնելով անոր, ըսաւ. «Ես կ'ուզեմ լսել ձայն մը որ իմ ականջիս մընջէր ձեր ըսածը:»

«Ի՞նչ կ'ուզէիր որ այդ ձայնը ըսէր ականջիդ, խնդացին միւս հովիւները, թէ դուն փաքրիկ հովիւն ես հարիւրնոց հօտին:»

Ամովս չկրցաւ զսպիլ իր գայրոյթը և պառթկաց. «Ես փրկիչն ու պահապանն եմ իմ ոչխարներուս, չէ՞ք տեսներ անոնց աչքերուն մէջ ևս կայ սարսափը հրեշտակներուն և զարմանքը երկնային երեւոյթներուն: Աստուած շատ զբաղած է Բեթղէէմի մէջ, և ժամանակ չունի մեր ոչխարներով հետաքրքրուելու:»

Ճիշդ այդ պահուն, տեսան հեռուէն մարդու մը մօտենալը իրենց: Հովիւները զարմանքով նկատեցին որ շուները չէին հաշեր եկողին վրայ: Եկողը աճառն ծերունի մըն էր, որ գաւազանի օժանդակութեամբ հազիւ կը քալէր: Օտարականը իրենց մօտեցաւ և կրակ ու կաթ խնդրեց իր նորածին գաւազանի և անոր մօրը համար:

Հովիւները իրենց ունեցած կրակէն բաժին հանել ուզեցին իրեն: «Ո՞ւր լնցնենք կրակը զոր կը խնդրես», ըսին ծերունիին: Ան իր վերարկուին փէշը ներկայացուց: Երբ հովիւները անոր մէջ լնցուցին կրակը, զարմանքով տեսան որ

470X

փէշը չէր այրեր: Յետոյ իրեն տաւին կաթ
և հաց և ճամբու դրին զինքը:

Ամովս երկար նայեցաւ մեկնողին ե-
տեէն, սակայն մնաց իր տեղը անշարժ:

Իջերունիին մեկնելէն վերջ, հովիւները
հետեւեցան իրեն և գացին Բեթղեհէմ:
Ամովս շրջեցաւ հօտին մէջ և ջանաց հան-
դարակցնել ոչխարները, որոնք արտա-
կարգ զգացումէ մը համակուած, անսովոր
շարժումներ կը փորձէին, սկանջնին լա-
րած հեռուն, կասկածոտ սպասումի մը մէջ:

Առտուան դէմ հովիւները վերադար-
ձան, և Ամովսին պատմեցին մտաւրի մէջ
ծնած Մանկան մասին:

Անոնք տեսած էին իբրև ախոռ ծառա-
յոզ այրի մը ազօա լոյսին մէջ, երիտա-
սարդ կին մը որ լուռ քաղցրութեամբ
իւր նորածինը կը դիտէր: Տակաւ բացուող
մութին մէջ, հովիւները նշմարած էին
նաև այն ծերունին, որ իրենցմէ կաթ,
հաց և կրակ ընդունած էր:

Երբ վերջացուցին իրենց տեսածներուն
նկարագրութիւնը, ըսին Ամովսին. «Իսկ
դուն ի՞նչ ըրիր հօս, ոչխարներուդ
բովը նստած»:

Ամովս սերտութեամբ ըսաւ անոնց,
թէ այժմ իր հարիւր ոչխարներու թիւը
հարիւր մէկի բարձրացած է, և անոնց
ցուցուց նոր ծնած ճերմակ գառնուկը:

«Այս նորածին գառնուկին համար դուն
լսեցի՞ր որևէ երկնային ձայն», ըսաւ
տարէց հովիւը Ամովսին:

Ամովս շարժեց իր գլուխը և ժպտեցաւ:
Սակայն հովիւները իր դէմքին վրայ տե-
սան զարմանալի պայծառութիւն մը, ճիշդ
նման անոր՝ զոր տեսած էին նորածին
Մանկան մօրը դէմքին վրայ:

«Ձեր երթալէն վերջ, ըսաւ Ամովս,
ես լսեցի ձայնը, և անկէ յետոյ ծնաւ
այս գառնուկը»:

Հազիւ Ամովսը վերջացուցած էր իր
խօսքը, անոնք բոլորը նշմարեցին որ
լուսակապոյտ երկնքին մէջ աստղը փշուր
փշուր կը տարադնուէր, գրելու համար
դարերով սպասուած կախարդական պատ-
գամը, զոր իրենք չէին կրնար կարգաւ
սակայն:

Ե.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Ստեփանոս քրիստոնէութեան նախա-
վկան է, ինչպէս նաև անոր եօթը նա-
խասարկաւազներէն մին: Երբ Եկեղեցւոյ
մէջ հաւատացեալներուն թիւը աճեցաւ,
առաքեալներու զբաղումը բազմապատ-
կընեցաւ, և այդ իսկ պատճառաւ գոր-
ծերու բաժանում ընել անհրաժեշտաւ-
թիւն մը դարձաւ:

Առաքեալներուն պաշտօնն էր ընդ-
հանրապէս աղօթել և քարոզել: Այս երկու
կարևոր գործերէ զուրս կային ուրիշ
երկրորդական պաշտօններ ևս, զոր օրի-
նակ՝ սեղանին սպասուարել, աղքատնե-
րուն նպաստ բաշխել, այրիներուն և
չքաւորներուն հոգ տանիլ և այլն: Առաք-
եալներ իրենց կարևոր պաշտօնը ձգելով
չէին կրնար զբաղիլ այս գործերով: Հե-
տեալոր կարօտ դասակարգին հոգատա-
րութիւնը լման տեղի չէր ունենար, մա-
նաւանդ հելլէնախօս քրիստոնեաներուն
աղքատները անխնամ կը մնային:

Յունախօս քրիստոնեաներ դիտողու-
թիւն ըրին այս մասին և հարցը առաք-
եալներու նկատողութեան յանձնեցին:
Առաքեալներն ալ գայն հաւատացեալնե-
րու ժողովին բերին, և անոնց հետ հա-
մախորհուրդ՝ ընտրեցին եօթը հելլէնա-
խօս պաշտօնեաներ, որոնք կոչուեցան
առաքեալներու գործակիցներ, սարկաւազ
անունի ներքև:

Այս սարկաւազներուն ընտրութիւնը
տեղի ունեցաւ առաքեալներու և հաւա-
տացեալներու միաձայն հաւանութեամբ:
Առաքեալներ եթէ ուզէին կրնային իրենց
ուզած մարդիկը պաշտօնի կանչել, հարցը
հաւատացեալ ժողովուրդին առջև առանց
ներկայացնելու, սակայն չըրին այդ և
ըսին. «Ձի վայելիք մեզի Ասուծոյ խօսքը
բողով եւ սեղաններու ծառայութիւն ընել,
ուսի եղբար՛ք, ընտրեցիք ձեզ քարի վկայ-
ուած Հոգւով Սրբով եւ իմաստութեամբ լեց-
ուած եօթը այր մարդիկ զորս զննեք այս